

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻԻ 6

1 Յուլիս 1895



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ.

ՃԻՎԵԼԷՎԵԱՆ

Պատկեր Սրբ. ճարտարագիտ. թիւ 20

1895

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1 Վարդապետութիւն ԺԲ. Առաքելոց — Ս.Վ.Ն
2. — Կրկնաբան նմանամայնութիւնք հին հայերնի մէջ.
Յ. Վ. Մխչեան
3. Կրօնական—Հնախօսական —
4. ՎԱՐԴ Ս. ՄՈՆԻԹՐԱՅԻ — ՅՈՎՀ. Վ. Աբէլեան.

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Ե Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Վեցերորդ Տարի

ԹԻԻ 6

1 Յուլիս 1895

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԺԲ. ԱՌԱՔԵԼՈՑ

ԿԱՄ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՎՔ Դ ՀԵԹԱՆՈՍՍ

Շարունակութիւն (*)

Դ.

Պահոց երկու օրերն, կամ կրկին առաքր հսկմանց, Այսինքն՝ Գրիստանէից եօթնեկին չորրորդ եւ վեցերորդ օրերն.

Որպէս զի քրիստոնէական հնութեան այս ամենակարեւոր եւ սքանչելի յիշատակարանն ուղղութեամբ ճանչցուի՝ ամենէն կարեւոր կէտն ընտրելով կը ներկայացունեմք, որով ընթերցողն լաւ պիտի համոզուի՝ թէ յայդ իբր ՚ի կեդրոն կը դիմեն այլ մասունքն : Վարդապետաբանն քրիստոնեայ եօթնեկին երեք օրերուն վրայ կը խօսի. չորրորդ եւ վեցերորդ օր, այսինքն երկու Պահոց օրերն, եւ Օր Տեանն կամ Տէրունի, Կիւրակէն :

(*) Տե՛ս Պատկեր Զ. Տարէ Բէ՛ս 5.

Ը Փրկոյն մէջ նորահաւատից կ'ըսէ. Ձեր պահքն (Փարիսեցւոց) կեղծաւորաց պահոց օրերն չըլլան, այսինքն մի՛ յերկրորդում աւուր Շաբաթուն, (եօթնեակն հրէական շաբաթիւ կը սահմանի, որոյ առաջին օրն է միաշաբաթին, այսինքն Ա. օր զկնի շաբաթուն, բ. օր՝ երկուշաբթի, եւ այլն), եւ մի՛ ի հինգերորդում, (հինգշաբաթին)։ Հաւատացելոց համար Պահոց օր օրինադրուած է չորրորդն եւ վեցերորդ, այսինքն՝ չորեքշաբթի եւ ուրբաթ. որով ՚ի Փարիսեցւոց կը հեռանան Պահք մեր մի՛ իցեն ընդ կեղծաւորացն, զի պահեն գերկրորդն եւ շաբաթուն զհինգերորդն, այլ դուք պահեցէք զչորրորդն եւ զուրբաթն։ Այս խօսք՝ քրիստոնէական հնութեան կարեւորագոյն կէտն կը պարունակեն. այսինքն նորածին Եկեղեցւոյ Հսկմանց օրերն, Առաքելական Սահմանադրութեանց եօթներորդ. գիրքն՝ որ ինչպէս այլուր ըսինք Վարդապետարանիս յարստութիւնն է, կը բացատրէ թէ ինչո՞ւ այդ կրկին օրերն ընտրուեցան քրիստոնէայ Եկեղեցւոյ համար. չորեքշաբթին՝ ՚ի յիշատակ Փարիսեցւոց դատաստանին ընդդէմ Տեառն եւ Յուդայի մասնութեան. Ուրբաթին՝ ՚ի յիշատակ չարչարանաց եւ մահու Տեառն, Կրկին աւուրք էին սգոյ։

Այս կրկին Պահոց եւ հսկմանց հաստատութիւնն ՚ի Փրկչէն է. ըստ որում կը կարգաւք յԱւետարանի՝ առ Յովհաննու աշակերտս եւ Փարիսեցիս եւ Դպիրս պատասխանելով Յիսուս. Մատթ. Թ. 14. — Մարկ. Բ. 18. — Դուկ. Ե. 33. յաջորդ տուներովն. համեմատէ ժԸ 12. Կը հարցունէին առ Տէր. Ինչո՞ւ մեք եւ Յովհաննու աշակերտքն կը պահենք եւ քու աշակերտք ոչ պահեն, այլ կ'ուտեն կը խմեն։ Փարիսեցիք իրենց պահոց կրկին օրերն յատուկ ազօթք եւ խնդրուածք կ'ընէին, ինչպէս Դուկաս կը յիշէ. Ե. 33. այդ սովորութեան պատճառն չենք խնդրեր մեք։ Վարդապետարանս նոր Կտակաց խօսքն հաստատելէ զատ նաեւ փարիսական պահոց օրերն կը յայտնէ, որք պահեն գերկուշաբաթին եւ զհինգշաբաթի. Յիսուս հարցանողաց պատասխան տալով կ'ըսէ. քանի որ անոնց հետ եմ ես՝ անիսի չպահեն, բայց երբ բաժնուիմ անոնցմէ՝ պիտի սկսին պահել. Միքէ կարօ՞ղ եք մանկանց առագաստի՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ՝ հրաման տալ պահել, Եկեղեցն առաւրք յորժամ բարձցի՝ ՚ի նոցանէ փեսայն, ապա պահեսցեն յառաւրս յայնոսիկ. այսպէս Դուկ. եւ Մարկ. նոյնպէս Մատթէոս կ'ըսէ. Եկեղեցն առաւրք յորժամ . . . պահեսցեն։

Քրիստոնեայ նորածին Եկեղեցւոյ յիշեալ կրկին Հսկման աւուրց պահէն Քրիստոսի այդ խօսքին վրայ հիմնեալ է, ինչպէս Տերառեղիանոս կ'ըսէ՝ Յղ. Պահոց զրոց մէջ. Յայտնի է յԱւետարանէ անտի, զի գաւառս յորում բարձաւ փեսայն՝ տանմանեալ երեսին պահք. եւ կը յարէ՝ այսպէս եւ Առաքեալք պահեցին:

Որ է ըսել՝ թէ փեսային բարձած օրերն Առաքեալք իբր սոց օր պահեցին: Պահել (observare) բառն Առաքեալին քով չնշանակիր հաստատել կամ օրինադրել այլ մանաւանդ հնազանդել, կատարել զբան Փրկչին: Առաք. Սահմբ. Ե. 14, կ'ըսեն. գտնորդ եւ զվեցերորդ օրն հրամայեաց պահել. ո՞վ, եթէ ոչ Տէրն, Հոգեւորականք (psychici) Մոնտանեայց հակառակ ազատ կը թողուն զհաւատացեալ՝ չարախակսն սոյն պահոց, պահել ուղղքն իններորդ ժամուն կը լուծէին. ինչպէս որ Յղ. Պահոց գրոց մէջ Տերառեղիանոս սաեպ կը կրկնէ: Իսկ Մոնտանեայք բացարձակ կը պահէին եւ մինչեւ արեւմտից ժամն:

Երմային (Հերմաս) մի հատուածէն կը հասկընամք Քրիստոնէից Հսկման ինչ լինելն. ուր կը պատմէ՝ թէ օր մը պահելով եւ լերան գագաթին վրայ նստած՝ Աստուծոյ ամեն բարեաց տուողին գոհութիւն մատուցած պահուն՝ Հովիւն կ'երեւի իր քով նստած, եւ կ'ըսէ. ինչո՞ւ այսպէս կանուխ առաւօտուն հոս եկար. — Առ. ի՞նչ եկիր այսր քնդ այգն. Զի՞ ասեմ, Տէր, ի Հսկման եմ. — Զի՞նչ՝ ասե. Հսկումն իցե. — Պահեմ, ասեմ, Տէր, (Հովիւ. Ե. 1. 2). Այս կարեւորագոյն հատուածէն կը քաղեմք՝ որ Հսկումն բառի յատկանականն՝ եկեղեցական լեզուի մէջ մտած է երկրորդ դարուն սկիզբն. վասն զի Հովիւին այդ հարցումն ինչպէս նաեւ չարունակութիւնն՝ Հսկման պահոց վրայ խօսելով: (յորս այլ եւս Հսկումն բառն չգործածեր այլ Պահք.) կը յայտնեն թէ նորածին Եկեղեցւոյ մէջ Պահք կը կոչուէր պահեցութիւնն, ոչ թէ Հսկումն. ինչպէս կը վարէ նաեւ Տեառն Վարդապետարանն: Դարձեալ Հերմաս կը յայտնէ՝ որ Հրակումն առաւել կանուխ կ'ըսկսէր, եւ Եկեղեցւոյ մէջ հատուտուն սովորոյթ էր, Որպէս սովոր է: ասեմ, Տէր, այնպէս պահեմ. եւ ոչ միայն պահել՝ այլ եւ զոհնալ. եւ գոհանամ զՏեառնէ վասն ամենայնի զոր արարն քնդ իս: Տերառեղիանոս Հսկման պահոց վրայ խօսելով՝ ընդդէմ Հոգեւորականաց կէս պահք կը կոչէ. «Եւ յառաքն յորում բարձաւ փեսայն՝ զկէս պահս հսկմանց հաստատեցին: Յղ. Պահոց ԺԳ: Եւ սոցա պա-

հոց լուծման՝ ժամուն համար կ'ըսէ. եւ 'ի նոցանէ խնդրելի է նախ՝ եթէ յիմե՞ գնոր գայս եղանակ կատարելոյ Հսկմանց օրինադրեն, Այլ զի քէ Պետրոսի եւ որոց ընդ նմա յինն ժամու աղօթից 'ի տաճարն մտանել ընթեռնումք, ո՛ր զիս հառաստի առնէ 'ի Հսկման գոյ նոցա 'ի նմին առուր. զի մարքասցուք զիննէրորդ ժամն պայման եւ լուծումն Հսկմանց ասել:

Նորածին Եկեղեցւոյ այս սովորութեան սքանչելի յիշատակութիւնն կը գտնուի Ս. Փրուտտուոսի եւ իր կրկին սարկաւազաց Աւգուրիոսի եւ Եւլոգիոսի վաւերական վարուց մէջ. զոր զրաժ է անոնց վկայական մահուան ներկայ Գրիստոնեայ մը: Վաղերիանու եւ Գաղղիենու կայսրութեան ժամանակ՝ կիրակէ օր մը ձեռքակալուելով (16 յունուարի 259), յաջորդ ուրբաթն Տարրակոնի չըջատեսարանին մէջ այրեցան: Մինչ Փրուտտուոս իր կրկին ընկերօքն 'ի մահ կ'երթար, կ'ըսէ Կենսագիրն, «Բազումք եղբայրական սիրով բաժակ մատուցանեն նմա խառնեալ՝ զի առեալ զօրասցի. ասէ. Ոչ է ժամ լուծման պահոց, Ձի ժամ չորրորդ էր աւուր: Վասն զի զչորրորդ օր պահոց 'ի Քանտին մեծահանդէս հռչակելով, զվեցերորդն ուրախ եւ անւկասկած տօնէր. զի ընդ մարտիրոսաց եւ մարգարէից՝ յերկինս զոր պատրաստեաց Տէր սիրելեաց իւրոց, լուծանէր զպահս» (Ruinart, Գործք, էջ 190. տպ. Վերոնա, 1731): Թիչեալ խօսքին մէջ երկու Պահոց օրերն յայտնի են. ուրբաթուն չորրորդ ժամուն վկայութեան դիմելով Փրուտտուոս՝ մատուցուած ըմպելին չընդունիր. վասն զի իններորդ ժամն չէր դեռ: Չորրորդ աւուր պահքն բանտին մէջ կը հռչակեն մեծահանդէս. այդ հըշիւն Գոհութեան խորհրդոյն ակնարկ մ'է, ինչպէս բազումք հինք կը վկայեն. եւ Գոհութեամբ ժամն իննին կը կատարուէր Պահոց լուծումն: Եւ վասն զի Ուրբաթ մինչեւ չորրորդ ժամն մնացին 'ի բանտին՝ ուստի չկարողացան Գոհութիւնն հռչակելով՝ պահքն լուծել: Գոհութեամբ զուարթացած Երանելին. կը դիմէր 'ի վկայութիւն, ապահով լինելով ընդ մարգարէից եւ մարտիրոսաց յերկինս լուծել զպահս (Հսկումն): Այս վերջին խօսքերով կրկին կարեւոր կէտեր հաստատեցինք. առաջինն՝ Հսկման Գոհութեամբ աւարտելն. երկրորդ՝ Գոհութեան էութիւնն, այսինքն Փրկչին իսկութեամբ ներկայութիւնն յայնմ, զոր Մարտիրոսաց եւ Մարգարէից հետ կը փութար վկայն անկասկած ժառանգել յերկինս: Baronio ծիրանաւորն՝ հին զրչաց վկայութիւնքն յառաջ կը բերէ (Թիւ 199) յամի Տեառն 57,

կրկին Հսկման աւուրց պահոց նկատմամբ, իսկ (թիւ 65) ըսածն՝ թէ Տարրակոնի Ս. վկայք՝ 262 ամին Հսկումն (պահքն) աւուր չորրորդ ժամէն սկսելով վեցին լուծած ըլլան, մեծ վրիպակ է:

Վկայաբանութեան Դ հատուածն մը պատմէ՝ թէ Սրբոց Վկայից կապանքն այրելով՝ որովք ցցերուն կապուած էին, ծունր կը դնեն փայտակուտին վրայ եւ խաչաձեւ տարածելով բազուկքն ըստ սովորութեանն եւ ըստ եղանակին նախ քան զիններորդ ժամուն հասնին կ'աղօթէին՝ զի ընդ վկայս եւ ընդ մարգարես յերկինս լուծցեն զպահս. (զմկումն): Ուշ դիր, ոչ յոտին՝ այլ ի ծունր, Զի պահոց օր է:

Ուստի յեօթնեկի երկիցս՝ Զորեքչաբաթին եւ Ուրբաթն Բրիստոնեայք Պահքն կամ Հսկմունքն կը հռչակէին. այսինքն՝ մինչեւ իններորդ ժամն կը պահէին եւ կը գոհանային զԱստուծոյ ի ձեռն Յիսուսի, Այս գոհանալոյն հակիրճ յիշատակն ունի Հերմաս. Վարդապետարանս կ'աւանդէ մեզ այդ աղօթքն, ինչպէս պիտի տեսնեմք, Տերտուղիանու Յղ. Աղօթից գրոց մէջ սքանչելի հատուած մը Վարդապետարանին սոյն աղօթքն ըմբռնելու զիւրութիւն պիտի ընծայէ, որ է այս. Զառուրս հսկմանց ոչ պարտ համարին բազումք գալ յաղօթս պատարագաց, վասն զի ի մարմնոյ Տեսուն ընկալեալ՝ լուծանի Հսկումն. Դիտելի է աստ Պատարագաց աղօթք խօսքն, Հսկմանց օրերն՝ Պատարագ չէր մատչեր, այլ միայն յառուր Տեսուն, ի Կիւրակէի. առ այդ կ'ըսէ աստ գալ յաղօթս պատարագաց, յոգնակի. իսկ Կիւրակէի վրայ խօսելով այլուր՝ կ'ըսէ եղակի. ընթրիք կամ կոչունք կամ ճաշ տեսուն, (Convivium): Յայլոց տրուած բացատրութիւնք մեր բանից նպաստաւոր են. Հաւատացելոց Հսկումն՝ Աղօթատեղւոյն մէջ ժողովելով եւ ի մարմնոյ Տեսուն ընդունելով կը լուծուէր. որով յայտնի է զի Կիւրակէից բեկեալ նուիրական հացն կը պահէին հաւատացեալք իրենց ժողովարանին մէջ: (1) Արդ բարեպաշտօն ընծայէ Աս-

(1). Այսպէս ըստ մեր եկեղեցւոյ Պահոց օրերն զկնի ճաշու ժամասացութեան կ'ըսկսի Քահանայն Օրհնէալ Խաչատուրեան, ապա ժամամուտ, Սուրբ Աստուծոյ, Դիրք, Աւետարան, Հաւատամք, եւ այլն, մինչեւ Ուշ արժանի, ուր ամբողջ կանոնն բողովով՝ ի «բժշկական» կը յարէ, ապա օրհնութիւն, հաղորդութիւն եւ գոհութիւն, ինչպէս աղօթքն ցոյց կուտան: Պահոց աղօթք խօսքն այսու լաւ եւս կը բացատրի:

տուծոյ Գոհութիւն. Մի՛ գուցէ առաւել եւս պարտապան առ.
Աստուած. Ո՛չ ասպարէն մեծահռչակ Հսկումն քո՛ եք եւ ՚ի
սեղան Տեառն կացցես. Ընկալեալ ՚ի մարմնոյ Տեառն եւ սյան-
եալ՝ գերկոսին վճարես. զհաղորդութիւն պատարագին եւ ըզ-
պաշտաման կատարումն. Գոհութեան հաղորդողաց պահքն
կը լուծուէր. զի հսկման սուգն եւ Տեառն մարմնոյ հաղոր-
դութեան ուրախութիւնն չէին կարող ընկերակցիլ. Այս պատ-
ճառաւ այն հաւատացեալք որք մարմնոյ Տեառն հաղորդուած
էին՝ չէին ուզեր գալ յաղօթս գոհութեան. առ այս է Տերառու-
ղիանու ըսածն. Երկուքն միասին կատարելու համար՝ զհաղոր-
դութիւն պատարագին եւ զպաշտաման կատարումն՝ զմարմին
Տեառն ձեռաց մէջ կը բռնէին մինչեւ հաւարակաց աղօթից
կատարումն եւ ապա կը ճաշակէին Տերառուղիանու եք եւ ՚ի
սեղան Տեառն կացցես խօսքն կը նշանակէ նաեւ առաջի սե-
ղանոյ Տեառն կենալու ձեւն. զի եթէ յոտին կանգուն աղո-
թէին՝ ուրախութեան նշան էր, իսկ ՚ի դուճա կամ անկեալ յեր-
կիր՝ սգոյ (1). Հսկումն յօրինակէ զինուարաց կոչումն ընկալաւ.
Համեմատէ Բ. Կորնթ. Ժ, 4. Ա. Տիմ. Ա, 18.

Ուստի եկեղեցական կարգաց մէջ կրկին ազգ ստիոց կար.
մին մինչեւ իններորդ ժամ. միւսն մինչեւ յերեկս. Առաջինն
՚ի Տերառուղեայ կոչի՝ Կիսաւայաճի, ինչպէս յիշեցինք, կրկին
Հսկման օրերուն. իսկ միւսն մինչեւ յերեկս պահք, ինչպէս էր
Քառասնորդն Աղուհացից կամ Աղմիքն. բաց ՚ի չաբաթ եւ
Կիրակէ օրերէն. Այս վերջինն կը հաստատուի նաեւ Լաւո-
ղիկեայ ժողովոյն 49երորդ կանոնէն. Ոչ է մարք նուիրել հաց
՚ի Քառասնորդս, բաց ՚ի չաբաթ եւ ի կիրակիէ. վասն զի
եկեղեցւոյ հին սովորութիւնն էր՝ ոչ պատարագել եւ ոչ հա-
ղորդել ամբողջ ազգմի ստիոց օրերն. Այս զգուշութեան պատ-
ճառն՝ Ս. Գոհութեան ընդունելութեամբ՝ չօչափմամբ՝ եւ տե-
սութեամբ՝ հաւատացելոց ընդունած շնորհաց մէջ է. այսինքն
ներքին զգալի բերկրութիւնն՝ որով եւ արտաքուստ կը խայ-
տալին, զոր Դիրք Ֆնծութիւն կը կոչեն. Դուգ. Ա. 44, 47. որ
անյարիր է աղցմեայ արամութեան եւ սգոյն հետո ինչպէս
խաւարէն յանկարծ ՚ի լոյս ելլողն, (համեմատէ, Յովհ. Ժ. 35).

(1) Համեմատ Մեր Եկեղեցւոյն յոտին կալով հաղորդելոյն,
եւ ՚ի ժամ Սրբագործութեան.

այսպէս եւ աւելի՝ Քրիստոսի Մարմնոյն եւ Արեան հաղորդելով հաւատացեալք ցնծութեան չնորհւ. կը լցուէին՝ Հակառակ արդիւնքն որոյց անարժանութեամբ կը մերձենան յԱյն՝ նկարուած է յԱռաքելոյն. յորոց ոմանք հիւանդանային, ոմանք մեռանէին. Կորնթ. ԺԱ., 30. Ս. Երանոսի նուիրուած նշխարին մէջ՝ ըստ կարգին՝ ի կատարել ընծայման խօսքէն յետոյ կը կարգաւորէ, Կոլեսսոսք զսուրբ Հոգին, որպէս զի ցուցցե լուսով իւրով զպատարագս եւ զնացս զայս լինել մարմին Քրիստոսի, եւ զբնական զայս արիւն Քրիստոսի (1). Ս. Երանոս. տպ. Migne Հատուած ԼԸ.

Այդ Լայսն որ զՄարմին եւ զԱրիւն Տեառն կը յայտնէր, ցնծութեամբ կը ընտրէ Հաւատացելոյց սիրան եւ կը զեղոյր. եւ ի հարկէ այս ցնծութեան հաղորդ էր Ս. Սեղանէն հաշակողն, զի Տէր ինքնին ցնծութիւն է. Տես Մատթ. Ին. 21. Մուտ յութախոսքին Տեառն քո. եւ Կիւրակէն՝ յորում Պատարագն կը հըռչակուէր՝ Օր ցնծութեան կը կոչուէր.

Եւ ահա բուն իսկ պատճառն. սուգն եւ պահք գոհութեան խորհրդոյն ցնծութեան հետ չմիաբանելով՝ աղցմեաց օրերն՝ եւ յաղուհացս յորս մինչեւ արեւմուտք սգով կ'անցունէին, Գոհութեան խորհուրդն չէր հռչակուեր. Այսպէս Քառասնորդական մեծ պահոց մէջ, նոյնպէս հալածանաց կամ արկածից ժամանակ ի Հովուաց հաստատուած (2) պահոց օրերուն Հաւատացեալք չէին հաղորդեր. Իսկ Հսկման օրերն՝ յորս երեկոյեանն իննիւրորդ ժամուն կը դադրէր պահքն, սուգէն սղատելով Քրիստոնեայք կը հաղորդէին նշխարին. Որոյ համար Տերութեանն յիշատակածն կ'ըսէ. Ոչ պարտ համարին բազումք գալ յաղօքս պատարագաց. այսինքն՝ ինչպէս Վարդապետարանին մէջ կը կարգանք՝ գոհաբանական աղօթից. Տէրունական խորհրդոյն հաղորդելէ յետոյ ցնծութեան հաղորդ պիտի լինէին, հսկման եւ սգոյ տխրութիւնն փարատելով, ուստի խրատ կուտայ հաւատացելոյց նշխարն ընդունել ի ձեռս եւ պահել, (3) ուղղորդ կացեալ յո-

(1) Պատուական հատուած մ'է այս, ըստ այսմ Մեր եւ Յայն Եկեղեցւոյ «Առեք կէրայք» յետոյ Հոգւոյն Սրբոյ կոչումն կը հասկըցուի. ի յայտնութիւն՝ ի ցուցումն փոխարկութեան Հացին եւ Գինոյ՝ ի Մարմին եւ յԱրիւն Տեառն.

(2) Ինչպէս մի քանի շաբաթապահքն առ. մեզ.

(3) Այսոր յիշատակն է առ. մեզ ի Ձեռնադրութեան «յափն տայ» զՍ. Հաղորդն.

տին (1), այսու իրենց ուրախութիւնն եւ յարգանքն յայտնելով, եւ սպասել՝ մինչեւ գոհութեան աղօթք աւարտին, եւ ապա իրենց իսկ ձեռքը հաղորդին։ Այսպէս կը լրանար թէ հաղորդութիւնն պատարագին եւ թէ պաշտաման կատարումն։ Պաշտաման բառիւ իմանալու ենք Եկեղեցւոյ սովորեալ ցոյց տուած ցնծութիւնն։ Տերտուղիանու սոյն խօսքերէն յայտնի է՝ որ Հսկման օրերն հաւատացեալք կը մատչէին Գոհութեան։

Դառնալով Վարդապետարանին, Ը զլսոյն մէջ Հսկման աւուրքն Պահք կոչելով աղօթից վրայ կը խօսի։ Գրիստոնէից յաւուրն երիցս կատարած աղօթից վրայ է խօսքն. Ժամերն էին, երրորդ, վեցերորդ եւ իններորդ։ (Տերտուղ. յղ. Աղօթից, ԻԵ). իսկ աղօթքն՝ Հայր մեր, երիցս յաւուրն։

Պահոց օրերուն Գ, Զ եւ Թ ժամերուն 'ի Ժողովի զըտնուող հաւատացեալք՝ ըստ Աւետարանի պատուիրին տէրունի աղօթքն պիտի կատարէին. զոր յիշելէ յետոյ Վարդապետարանն՝ Գոհութեան աղօթքն կը յիշատակէ. որք անշուշտ մեզ հասողաց ամենէն հնազոյնքն են։ Սոյն կրկին օրերուն վերաբերող քանի մը կէտեր համառօտիւ չօչափեցինք. զի մի միայն բառ յաջորդ աղօթից մէջ՝ բաւական է ասպցուցանելու՝ թէ Պահոց օրերուն սեպհական էին դոքա։ Եւ շատ իսկ յայտնի է թէ ցարդ ըսածնիս Վարդապետարանին հնութեան պատշաճաւոր է, եւ սորա քան զՏերտուղիանոս երիցազոյն լինելուն փաստ։

Ե.

Գոհութեան աղօթք

հրամայեալք Հաւատացելոց, նախ քան զհաղորդութիւն Հաւատոյ Խորհրդոյն. 'ի կրկին առուրս պահոց։

Եւ վասն գոհութեան այսպէս գոհացարուք. նախ զբաժակէն.

1. Գոհանամք զքեզ Հայր մեր, յաղագս սրբոյ դարբեան որբոյ որդոյ քո զոր յայտնեցեր մեզ 'ի ձեռն զառակի քո Յիսուսի. քեզ փառք յաւիտեանս։

Ասլա զնշխարէն.

(1) Դիտե հաղորդութիւնն ատեն ուղղորդ կալն յօտին 'ի նշան ցնծութեան։

2. Գոհմանամբ գրեմ Հայր մեր, վասն կեանաց եւ գիտութեան, զոր յայտնեցեր մեզ 'ի ձեռն Յիսուսի զառակի բո. քեզ փառք յաւիտեանս:

3. Որպէս նշխարս այս ցրուեալ 'ի վերայ լերանց եւ ժողովեալ եղեւ մի, այսպէս ժողովեցի եկեղեցի բո 'ի ծագաց երկրի յարքայութիւն բոյ. զի բո է փառք եւ գորութիւն Յիսուսի Գրիստոսիս յաւիտեանս:

Ուշ զրուի նախ՝ եւ վասն Գոհութեան այսպէս գոհացարոք, խօսքին. ինչպէս որ է զլուի 1 ըսաւ, եւ յաղագս մկրտութեան այսպէս մկրտեցեր, նոյնպէս է զլուի 3, որպէս հրամայեաց Տէր այսպէս կացէր յաղօթս: Բաղդատեալ նաեւ ժԱ. 4. ԺԵ. 4 եւ 6 զլսոց միջիններն՝ կրնայ ըսուիլ՝ թէ որպէս հրամայեաց Տէր խօսքն՝ ինչպէս մկրտութեան վրայ խօսած ժամանակ լռելեայն կը հասկըցուի, նոյնպէս ալ աստէն: Չենք կրնար ըսել՝ թէ է զլսոյ 3 համարին ամբողջ պարունակութիւնն՝ այսինքն, որպէս հրամայեաց Տէր յաւետարանի անդ իւրում այսպէս կամ ժԵ 4 եւ 6ի որպէս կայ յաւետարանի անդ խօսքերն ամբողջովին աստ լռելեայն իմացութիւն. վասն զի Վարդապետարանիս աստէն յիշատակած օրէնքն չկան յԱւետարանի Տեառն: Վասն զի Տէրն զկնի յարութեան իւրայոց շատ բաներ ուսոյց եւ պատուիրեց. զորս Յուստինոս վկայ իւր առաջին ջատագովականին մէջ կը յիշատակէ. (Գլ. ԿԵ, ԿԶ, ԿԷ) Մկրտութեան եւ մանաւանդ Գոհութեան վերաբերողք. ինչպէս յայտնի է առ Բարեպաշտն Անտոնիոս ուղղած խօսքովն. Յայտնեալ Առաքելոց իւրոց եւ աշակերտաց՝ ուսոյց զայսոսիկ, զոր զի տեսցես եւ քեզ ճաղորդեմք. եւ զայդ յիշեալ զրուագներուն մէջ կը պարզէ: Ուստի որչափ ալ Վարդապետարանիս ժ զլսոյն վերջերն Մարգարէից թոյլ կը տրուի Գոհութեան աղօթքն երկարել, սակայն անհաւանական չէ թէ Տէրն ինքնին յարութենէն յետոյ խօսած ըլլայ այս աղօթքն Գոհութեան վրայ ճառելով:

Դրուի ժԻ Վարդապետարանն Կիւրակէ Տէրունի աւուր մէջ այլապէս կը խօսի. Ըստ կիւրակի Տեառն ժողովեալ բեկէր հաց եւ գոհացարոք: Բեկանել հաց ինչպէս պիտի տեսնեմք: Սրբազործութիւնն է հացին, զոր ապտ Գոհութեան աղօթից մէջ չեմք տեսներ. ուստի շատ հաւանական է կարծել՝ թէ սրբեալ Նուէրն 'ի պահեստի կայր պատրաստ յԱղօթատեղւոյ, զոր արդէն իսկ աղօթից ձեռն կը յայտնէ:

Բաժակին եւ Նշխարին վրայ Գոհութեան աղօթք նախ

քան զհաղորդին՝ զատ զատ են. նախ զԲաժակեն, ապա զՆըշխարեն. Իսկ հաղորդուելն յետոյ երկուքին համար միանգամայն կը դոճանան. Նախ զԿերակրոյն եւ տալ զԸմպելոյն. նա ոչ Նշխար կը հոշուի եւ ոչ Հաց, այլ Կերակուր. սա ոչ է այլ եւս Բաժակ, այլ Ըմպելի. Այսու երկու բան՝ կը հասկըցուի, մին՝ թէ սրբազործութիւնն ընծայից առաջուց կատարուած էր. ապա՝ թէ ոչ վասն հացի հարկ էր ըսել, մինչ՝ նշխար բաժնն. նշխարել զհաց՝ բեկանել զհաց իմաստն ունի յինքեան. որուն վրայ ապա ուրեմն՝ ի Կիրակէի. Նախ Բաժակին վրայ կը խօսի, ապա Գոհութեան հացին Նշխարին վրայ, վասն զի զատ խօսելովն եւ նախ միոյն ապա միւսոյն վրայ գոհանալով՝ Փրկչին մահուան յիշատակն կը կատարէ. որով աշխարհն կը բաժնուի ՚ի մարմնոյն ՚ի խորհրդական սեղանի խաչին, եւ Կամփախի ՚ի Բաժակին, սու որ Հաւատացեալք կը դառնան գոհանալով. Այսպէս Առաքեալն Ա. Կորնթ. Ժ. 16, Վարդապետարանիս յիշած գոհութիւնն յիշատակելով, (զուցէ Պահոց օրերն՝ ակնարկելով), կ'ըսէ նախ. Բաժակն օրհնութեան (զոհութեան) զոր օրհնեմք. . . եւ ապա, Հացն զոր բեկանեմք. . . այլ երբ սրբազործութեան վրայ կը խօսի՝ Անդ ԺԱ, 24, 25, հակառակ ընթացքն կը բռնէ, ինչպէս ըրաւ Տէրն ընթերցոց ժամանակ. Այս կարգաւ կը յառաջէ Վարդապետարանո՝ նախ Կերակուրն եւ ապա Ըմպելին մատակարարելով ՚ի հաղորդութիւն Հաւատացեաց, այսպէս. Կերիցէ . . . արբցէ ՚ի զոհութենա. Նախ զՄարմինն եւ ապա զԱրիւն Տեսնն հաշակել յետոյ՝ գոհութեան ազօթից մէջ կը կարգաւք, այլ մեզ շնորհեցէ հոգեւոր Կերակուր եւ Ըմպելի. . . մինչ մարմնաւոր սեղանոյ համար սող մ'առաջ ըսաւ, Կերակուր եւ Ըմպելի Էրբի. Երրորդ ազօթից մէջ Ս. Գոհութեան Նշխարին համար այսպէս կ'ըսէ. — Որպէս Նշխարս այս ցըրուեալ ՚ի վերայ լերանց եւ ժողովեալ եղեւ մի, այսպէս ժողովեսցի Եկեղեցի բո ՚ի ծագաց երկրի յարքայութիւն բոյ. Հաց բաժն աւելի ճշդիւ միութեան նշանակն էր, յորում բազմաթիւ ցորենահատք հաւաքեալ մի մարմին կը կազմնէ, ինչպէս եւ հաւատացեաց ժողովն ՚ի միութիւն եկեղեցւոյ. մինչ կը տեսնեմք որ Նշխար բաժն կը վարէ Վարդապետարանո՝ Դարձեալ եզական ձեւովն Նշխար բաժն աստէն զիպուածի արդիւնք չէ. Որպէս նշխարս այս. եւ վերնագիրն՝ Ապա զնշխարեն. Յայտ է որ Սեղանին վրայ բազմաթիւ պիտի գտնուէին նշխարք հացի. Կամ մեծ կոտոր մի հացի, որ բազմաթիւ մասանց կրնար բաշ-

խուիլ. բայց զի խորհրդական էր անդ հացն՝ այսինքն սրբեալ 'ի Մարմին Տեառն, ուստի թէ եւ առ աչս բազումք՝ այլ իրօք մի մարմին Տեառն է, եզական Առ այս կ'ըսէ՝ Նշխարս այս որոյ տարերք (ցորենահատ) լերանց վրայէն հաւաքուելով եղեն մի Առ այս կը պատշաճի յունական մաշտոցի օրէնքն. ըստ որում երբ սեղանի վրայ բազմաթիւ սրբաբարձեալ նշխարներ գտնուին՝ կը հրամայէ Քահանային խաչակնքել այդ հացերն ու բռնել. Եւ արա զայս հաց, եզականաբար, ինչպէս մի է Յիսուս Քրիստոս, եւ ոչ թէ ինչպէս ոմանք յանգէտս կ'ըսեն, զհացս զայսոսիկ. Եթէ այսպէս՝ ուրեմն Յիսուսի 'ի Ս. Գոհութեան իրական ներկայութեան նոր փաստարանութիւն մ'ալ կ'ունենամք. իմաստն ալ զայդ կը պահանջէ, զի նշխարն Եկեղեցւոյ անբաժանելի միութեան օրինակ է (1)

(1) Այսպէս եւ 'ի մեզ զկնի «Առեք կերայքի» եւ ԱՐԱ. (նոյն է ԱՐԱՍՅԵՍ) ըսելն՝ կոչելով զՀոգին եւ կնքելով զընծայսն. Ս. Ն. Լամբրուկեցի Որով (Ս. Հոգով) զհացս օրհնեալ մարմինն հաշարապետս արացեն կը մեկնէ այսպէս. Պատարագն խաչին խորհուրդն լինելով՝ որպէս 'ի խաչին Աշխարհի մարմին Քրիստոսի Աստուծոյ է, սոյնպէս եւ 'ի Ս. Սեղանի Զահեղձ Մարմին եւ Արեւն Աստուծոյ. եւ որպէս յարգանքի Կուսին Ս. Հոգին է ոգեւորոյն աստուածային Մարմնոյն՝ նոյն եւ սատեն Աստուծոյ Քրիստոսի Զոհելոյ եւ Անշնչացելոյ Մարմնոյն եւ Արեւն ոգեւորոյն. Առ այս Աստուածաբանք զԿոչումն Հոգւոյն հարկ կը համարին 'ի Պատարագի.

(Շարայարելի)

Ս. Վ. Ն.

Կրկնաբան Կմանաձայնոչիւնք

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԷՁ

(Շարունակութիւն տես անցեալ բիւ.)

Շարաթանամ 'ի չարաթս' զչա-	Ուրախութեամբ ուրախ առնեմ
բաթս	լինիմ
Շարաթացուցանեմ զչարաթս	Չարակնէ ակն քո (նախանձիս
Շահս չահիմ. Տէս Օգուտ	Չարաչար չարեօք չարչարեմ
Շինեմ չինուած՝ չինուածս՝ զչի-	Չարչարակից լինիմ չարչարա-
նուածս	նաց
Շնչեմ զչունչ	Չարչարանս՝ չարչարանօք չար-
Ողբամ ողբս՝ զողբս	չարիմ
Ողորմիմ ըստ մեծի ողորմու-	Չարչարիմ 'ի չարեաց
թեան	Չափեմ չափով
Ողորմութեամբ մեծաւ ողորմիմ	Պանանջանօք պանանջեմ
Ոտնակապօք կապեմ	Պանեմ զպանպանութիւն՝ ըզ-
Որոճան որոճեմ (մտքին մէջ	պանպանութիւնս
զարձընել)	Պանեմ պանս
Որսամ որս	Պանպանութեամբ պանեմ
Ուխտեմ ուխտ՝ զուխտ՝ ուխտս	Պանեմ պանս՝ զպանս
Ուխտիւք ուխտեմ	Պանս պանեմ
Ուսանիմ ուսումն	Պաղաւիմ զպաղատանս. Տէս
Ուսուցանեմ ուսումն զուսումն	Աղաչանօք
Ուրախ առնեմ յուրախութիւն	Պաճարս պաճարիմ. Տէս Հնա-
մեծ	րիմ
Ուրախ լինիմ ուրախութիւն	Պաճուճանօք պաճուճիմ. Տէս
մեծ. Տէս Խնդամ եւ Յնծամ	Չարդու
Ուրախ լինիմ յուրախութիւն՝	Պաչարումն պաչարիմ
յուրախութեան	Պաչտեմ զպաչտօն. Տէս Ծա-

ռայելմ եւ Հարկ	Պաակաւ՝ պսակօք՝ պսակիմ
Պատահարք պատահեմ, Տէս Զան ջանամ	Անցք, Սահմանեմ սահման
Պատանօք պատիմ	Սաղմոսարանաւ՝ սաղմոսիւք
Պատերազմաւ պատերազմիմ,	սաղմոս ասեմ
Տէս Մարտիւ	Սգամ սուգ մեծ յոյժ
Պատերազմիմ զպատերազմ՝ ըզ-	Սերմանեմ սերմանեօք
պատերազմունս, Տէս Մարտնչիմ	Սերմանեմ սերմանիս՝ զսերմա-
Պատժապարտ լինիմ պատժոց	նիս
Պատժեմ պատժօք մեծամեծօք	Սերմանեմ սերմն՝ զսերմն՝ սեր-
Պատճառս պատճառիմ	մանս
Պատմեմ պատմութիւն	Սերտ սիրով սիրեմ
Պատուեմ պատուով մեծաւ	Սէր սիրեմ
պատուովք	Սիրեմ զսիրելիս
Պատուիմ 'ի պատիւ	Սղոցեմ սղոցօք
Պատուիրեմ զպատուէր	Մնալաստակ առնեմ 'ի վատա-
Պատուիրեմ զպատուիրանս	կոց
Պատրաստեմ պատրաստութիւն	Սովամահ մեռանիմ
Պատրաստեմ 'ի պատրաստու-	Սուգ սգամ
թիւն	Սուր սրեմ, Տէս Սրեմ,
Պատրեմ պատրանօք	Սուրբ լինիմ 'ի սրբութիւնս՝
Պար առնում պարուք, Տէս	սրբութեանց
Կաքաւ	Սպանանեմ զսպանունն
Պարգեւեմ պարգեւ, Տէս Լուէր,	Սպառնամ սպառնալիս
Պարգեւս բարեաց պարգեւեմ	Սպիտակացուցանեմ զսպիտա-
Պարեմ զպարս, Տէս Պարուք	կուցս
Պարզեմ զպարզուածս (երկնից)	Ստանամ ստացուածով՝ ստաց-
Պարժանօք պարժիմ	ուածս
Պարժիմ պարժանս, Տէս Խրոխ-	Ստեղծանեմ զստեղծուածն
տունն	(կուռք շինել)
Պարուք պարեմ, Տէս Պարեմ	Ստեմ զստութիւն
Պարսպեմ պարսպով	Ստիպով ստիպեմ
Պարտս պարտիմ	Ստուգիւ ստուգեմ
Պղծեմ 'ի պղծութիւն	Սրբեմ զսրբութիւն՝ սրբու-
Պղծիմ 'ի պղծութեանց	թեամք
Պղծիմ 'ի պղծութիւնս	Սրեմ զսուր, Տէս Սուր,
Պղծիմ պղծութեամբ	Սրտմտեմ սրտմտութիւն, Տէս
Պոռնկիմ պոռնկութեամբ	Բարկանամ եւ Ցասնում,

Վաճառեմ վաճառ՝ 'ի վաճառ՝	Տնկեմ տունկ՝ զտունկ՝ տունկս
'ի վաճառի	Տուրս տամ. Տէս Տամ 'ի տրոց
Վաճառիմ ըստ վաճառի	Տրտմիմ յանհնարին տրտմու-
Վաճառս վաճառեմ	թիւնս
Վաստակս վաստակեմ (չատ աշ-	Տրտմիմ տրտմութիւն մեծ
խատիլ)	Տօնեմ տօն տետն
Վարձանօք վարձիմ (օժիտով	Տօնեմ զտօնս
կին առնուլ)	Ծանկամ ցանկութիւն. Տես
Վարս վարեմ. Տէս. Կեանս	Տենչամ
Վիճակեմ վիճակս	Ծանկանամ զցանկութիւն
Վիճակեցուցանեմ վիճակով տալ	Շտմուեմ ցատումն. Տէս Բար-
զվիճակ	կանամ եւ Սրտմտեմ.
Վկայեմ վկայութիւն՝ զվկայու-	Յնծամ ցնծութեամբ. Տէս Խըն-
թիւն	զամ եւ Ուրախ լինիմ.
Վնասեմ զվնաս	Յնորս ցնորիմ. Տես 'ի ցնորս
Վշտակից լինիմ վշտաց	Յօղ ցօղեմ
Վրէժխնդիր լինիմ զվրէժ. Տէս	Յօղեմ զցօղ
Քինախնդիր	Փախստիւ փախչիմ
Տամ 'ի տրոց. Տէս Տուրս	Փայլատակեմ զփայլատակունս
Տամ տրիտուր (փոխաբերել)	Փայլատակեցուցանեմ զփայլա-
Տանջանօք ստնջեմ	տակունս
Տապանամ 'ի տապ մեծ (տա-	Փայլեմ զփայլելն (սաստիկ փայ-
քէն տոչորել)	լիլ)
Տառանորդեմ 'ի տառանորդաց	Փառաւորեմ 'ի փառս (մեծու-
Տառանորդս տառանորդեմ	թեան)
Տարազիր գրեմ (աքսորել)	Փառօք մեծօք փառաւորեմ
Տեղ տեղայր (անձրիւ անման կր	Փողս հարկանեմ փողովք } փող
թափել)	Փողս փողեմ } զար-
Տեղամ զտեղ	նել
Տենչամ տենչանս. Տէս Ծանկամ	Փորձ փորձեմ
Տեսանեմ տեսումն	Փորձանս փորձիմ
Տեսանեմ զտեսիլ՝ 'ի տեսլեան	Փորձեմ փորձանօք՝ 'ի փորձու-
Տեսիլ տեսանեմ տեսլեան գի-	թեան
շերոյ	Փորձիմ 'ի փորձանս
Տեսիլ՝ տեսիլս տեսանեմ	Փութով փութամ. Տէս Ճեպով
Տիրեմ տերանց	Փրկիմ զփրկութիւն. Տէս Ազա-
Տիրեմ տէրութեամբ	տիմ.
Տիրեմ տէրութիւն մեծ	Քաղցրանամ քաղցրութեամբ

Քանդակ՝ քանդակեմ. Տէս Դրօ-	Օգտութիւն՝ օգտեմ (օգուտ ու-
չեմ.	նեկ)
Քանդակեմ քանդակս՝ դքան-	Օծանեմ յօծումն (խելոյ)
դակս	Օտարանամ 'ի մէջ՝ օտարաց
Քարածիզ լինիմ քարամբք	Օրինադիր լինիմ զօրէնս
Քարամբք քարկոծեմ	Օրհանս եհաս
Քարընկեցութեամբ քարկոծ	Օրհնեմ 'ի ձայն օրհնութիւն
առնեմ	Օրհնեմ յօրհնութիւն՝ յօրհնու-
Քարկոծ առնեմ քարամբք	թեմէ
Քարկոծեմ քարիւք	Օրհնեմ օրհնութեամբ՝ յօրհնու-
Քարողեմ զքարողութիւն	թիւնս
Քարողեմ ըստ քարողութեամբ	Օրհնեմ զօրհնութիւնս
Քինականդիր լինիմ վրէժխնդրու-	Օրհնիմ յօրհնութեմէ
թեամբ. Տէս Վրէժխնդիր.	Օրհնիմ օրհնութիւնս
Օգուտ օգտիմ. Տէս Շահս.	

Հոս քանի մը մասնաւոր դիտողութիւններ աւելցնել պատ-
շաճ կը համարինք՝ առ 'ի լուսաբոյն խելամասութիւն վերոյիշեալ
կրկնաբան պարձուածներուն.

1. Խնչպէս կ'երեւի սոյն ցուցակին մէջ՝ պարզ եւ ամանց-
եալ բայեր խնդիր առած են իրենց պայական արմատն, աճե՛մ զա-
նա՛ն, անխնայե՛մ անխնայ, մըրե՛մ մըրա՛ն, յո՛ւն յո՛ւն, եւայլն:
Թէ եւ առաստարակ այս բայից խնդրառութիւն հայցական հո-
լով է՝ նախդրիւ կամ աննախդիր, սակայն ստեպ անգամ եւս
ուրիշ հոլովներ ալ կը գործածուին՝ վերջապէս կամ նախդրիւ
արական, բացառական, գործիական (զայով իսկ) եւ ներգոյա-
կան: Կը գտնուին նաեւ ընդ ըստ՝ 'ի վերայ՝ 'ի մեջ՝ նախադրու-
թիւնք, եւ ճեպով՝ քաջով՝ սրտով՝ եւայլն մակբայք 'ի կիր
արկուած:

2. Կան վայելչաբան կրկնութիւնք իսկ խնդրոց՝ թէպէտ
քիչ անգամ գործածուած. այսպէս, անուանե՛մ ըստ անուան՝ զանա՛ն՝
մահոց մահս մեռա՛ն, յանցանե՛մ յանցա՛ն, յանցանայ եւայլն:

3. Մէկ քանի նմանաձեւ կրկնաբանութիւնք կը գտնուին
անուանե՛մ զանա՛ն՝ պահե՛մ պահս՝ լարս լարե՛մ, որք կրկին ու բոլո-
րովին տարբեր նշանակութիւն ունենալով՝ հարկ եղաւ մէկմէկէ
որոշել ըստ իմաստից, ինչպէս կը տեսնուի 'ի ցուցակիս:

4. Անդէմ ժամանակի ձեւով կրկնաբան նմանաձայնութիւն
ներն եւ այլք ոչ սակաւք որք պատահական երեւոյթ մ'ունէին՝

րիական ծաղուռն ունենալ նախ որոշ չէ, եւ երկրորդ ենթադրելով իսկ այդպէս լինել՝ պատճառ եւ տապաղոյց չէ այդ յիշանեանց անտի Երկրաւոր դրախտին գաղափարին 'ի Քրիստոնէութիւն փոխադրուած լինելն հաստատելու, եւ զի յոյնն եթէ Պարտէզ կոչեր է 'Նախկին մարդոյն բնածին վայրն' հայերէնն կ'ըսէ 'Իրախտ, զի Իրախտ եւ Պարտէզ նոյն ծաղկուէտ ծառաստանն կը նշանակէ:

Իրախտի կրօնական խմատն՝ (յոյն բառիւ Պարտէզ՝) Քրիստոնէ երեք դար առաջ Եօթնանից թարգմանութեամբ սկսաւ յունարենի համար, մինչդեռ Ծննդոց գիրքն իր երբայական Gan բառիւն՝ (դրախտ) տաան դարերէ աւելի անկէց ստաջ գրուած է, Խնչ, միթէ Ծննդոց հեղինակն առաջին մարդն յեղեմ դնելով՝ տաան դար յետոյ զալիք Պարսիկ վեհազանց զիցազարմից կերտած Պարստեզքն եւ պուրակքն յիշելով՝ դրած էր, եւ սաւ կայն խօսքին հետեւանքն այս է:

Բառազրիտօրէն խօսիմք, եթէ Իսրայէլ 'ի Պարսից առած է Երկրաւոր Իրախտն՝ ինչո՞ւ փոխանակ մազդեպեան Վայր (Vara) սրբազան փակին անունն առնելու՝ սովորական եւ ոչ սրբազան բառ մը գաղեր ընտրել է նոյն լեզուէ, ինչպէս է Պարտէզն, զոր ոչ թէ երբայցեյն այլ յոյնն դործածած է, եւ յունական բառիս համար նոյն հարցումն կրկնեմք դարձեալ:

Գալով Յիմայի Վայրա սրբափակին՝ ամենեւին իսկ տարբեր է եղեմականէն:

Իրախտին գաղափարն չատ հին է, մինչդեռ Յիմայի Վարայն չատ կրտսեր ամօք: Աւետայի այն զուլին որ ասոր վրայ կը խօսի՝ իրանական գրոց մէջէն կըզիացեալ հատուած մ'է: Վասն զի Աւետայի մէջ Յիմայի վրայ չատ տեղ յիշատակներ կը գտնեմք, իսկ Վարայի նկատմամբ եւ ոչ մի, ապացոյց վերջի ժամանակաց գիւտ լինելուն: Իսկ իբր նմանութիւն եղեմայ եւ Վարայի մէջ՝ ընաւ իսկ Վարա ընդարձակ գետին մ'է, յորում Յիմա քնակալաններ եւ կրկէմներ կը չինէ, եւայլն, հոն ամենազգի կենդանի եւ մարդ՝ տունի եւ ծառ կը հաստատէ, գերբնական լոյս սփռած է ամեն կողմ, հոն մարդիկ քառասուն տարին անգամ մը կը ծնանին, աստեղք եւ լուսին եւ արեւ միանգամայն կ'երևին: Հուսկ ուրեմն Վարա մինչեւ աշխարհիս կատարածէն անմիջապէս առաջ զիգելիք արհաւիրաց ժամանակ կանգուն պիտի մնայ: Արդ՝ ուրեմն, ո՞ւր է յայտմ եղեմական դրախտին նմանութիւնն, եւ այնչափ ակն յայտնի է

այս՝ մինչեւ քանապաղ իմաստասիրաց չատերն հակառակն հաշ-
ւաստած են. այսինքն թէ Պարսկէք 'ի Մինչոց քաղած են այդ
գաղափարն *Sku. Die Yima Sage, Dr. Kohut.*

Գ. Դիւաց հաւատքն. բարոյական ջարեաց պատճառք.
Ս. Գրոց Սատանային նախադասն երանեան Անրիմանն (*Anro-
mainyus*) կը գնին ոմանք, զրադաշտեան հակառակորդն (*Paity-
arem*). Կարեւոր է մանր քննութիւն:

Ս. Գրոց մէջ Յորայ գիրքն յայտնապէս յոյց կուտայ Սա-
տանային հակառակութիւնքն. իրանեան վէպի մը նմանութիւնն
կը համարին հակառակորդք. Առաջին տեսութեամբ Երանելոյն
փորձիչն կարծես աւետական դիւին (*deva*) հետ նոյն է նմա-
նութեամբն. սակայն զժրախտ դիանականք, կարծես թէ քայլ
մ'աւելի առնելով անդին անցնել չեն ուզեր, վասն զի հոն այն
երկրորդ քայլին պիտի բացուի քոզն. Չեն ուզեր այժմ պարզել
խնդիրն. վասն զի յայնժամ աստուածային յայտնութեան գէժ
մրցել պիտի զժուարանայ իրենց. ինչ հարկ. Վասն զի ական յայտ-
նի պիտի տեսնային՝ թէ Յովրայ գրիչն մազգեղեան կրօնից
տեղեակ չէ, անոր աղբեղութիւնն կրած չէ. այլ մանաւանդ թէ
պարսկականին գէժ ընդ գէժ հակառակն է. Կրկին մատենաներէ
մի մի հատուած վկայեն ըսածնուս:

Յովբ. «Օր մը Աստուծոյ որդիքն ժողովեցան իր առջեւ ել-
լելու եւ ծառայելու համար. Ստանայ անոնց մէջէն կ'երեւի
եւ Աստուած կ'ըսէ անոր. Տեսա՞ր Յովբ ծառայս. տեսա՞ր որ ի-
րեն նման պարզ եւ ուղիղ՝ երկրւոյն եւ 'ի մեղաց խուսօղ չը-
կայ. Սատանայն կը պատասխանէ. Մի՞թէ ընդունա՞յն տեղ Յովբ
Աստուծոյն կը վախէ. ո՞չ ապաքէն զու զինքն եւ իր ընտանիքն
եւ ստացուածքն ամբապատեր ես. իր ձեռաց գործն զու չօրհ-
նեցիր. իր հարստութիւնքն չքաղմացա՞ն երկրիս վրայ: Այլ եր-
կարէ քիչ մը ձեռքդ, զպիր իր ընչից, եւ տեսնես թէ երեսդ 'ի
վեր չհայնցեր. Աստուած ըսաւ Սատանային. Լսաւ, բոլոր ստաց-
ուածքը քու ձեռքդ, միայն մի՛ իրեն մերձենար»:

Երկրորդ անգամ նոյն դէպքն կը կրկնուի. այն ատեն Ասա-
ուած հրաման կուտայ Սատանային չարչարել զՅովբ. արդիւլով
կենացն մօտիլ Սատանայն կը հարուածէ զՅովբ յինչս եւ յան-
ձին չարաչար ախաիւ. առանց կենացն վնասելու Երբ փորձու-
թիւնն աւարտեցաւ եւ Երանելին համբերութեամբն վաշխեցաւ,
Աստուած կ'առողջացունէ զնա իր խզճալի ցաւերէն եւ հարիւ-

րապատիկ պարգևելով կորուսած բարիքն՝ երանելի մահուամբ՝ լի աւուրք կը հանէ աշխարհէն. առանց Սատանային հակառակութենէն աստուածային կամքն երկիւղ կամ վրաս կրելու:

Ամբողջ այս պատմութեան մէջ կը տեսնեմք Սատանայն ստորին պաշտօնեայ մը, ամենայնիւ յՍտուածոյ կամաց կախեալ, Աստուծոյ դժած չաւղին մազիւ չափ հպատակ. անկարող որ եւ է կերպով Աստուծոյ հակառակելու կամ նորա գործն խափանելու:

Առնունք այժմ մազեղեւան Ահրիմանն. Արարչին առջեւն է ինքն ալ Ահա Դիւատուր (Vendidât) զրոյ ԻՖ զլուինն:

Աւետար. «Ահուրա Մազդա կ'ըսէ առ սուրբն Զարաթուստր (Zarathoustra). Ես Ահուրա Մազդա . . . երբ այս գեղեցիկ եւ հրաշակերտ բնակարանն ստեղծեցի՝ ոճրագործ դեւն (deva) նայեցաւ. ինծի Սպանիչն Ահրիման ինձ դէմ 99,999 չարիք ստեղծեց. Արդ ուրեմն բժշկէ՛ զիս, ո՛ր Մանթրա Սպենա, սուրբ լուսով, փոխարէն հատուցից քեզ հազար ձի, հազար եղն, հազար ուղտ, եւ այլն: Մանթրա Սպենա՝ (սուրբ օրէնքն կամ երգման ձեւն) կը պատառխանէ. Ինչպէս այդ չարիքէն բժշկեմ, քեզ, Յայնժամ Ահուրա Մազդա կ'ըսէ առ Նայրյոսանհա, Իմաստունդ, գնա՛ կանչէ գԱրիաման եւ ըսէ նմա զի Ահրիման 99,999 չարիք կը վտանգէ զիս — Արիաման կ'ընթանայ եւ նոր սերնդեամբ յովատայիներ եւ կողեռն կը բերէ, ինն ալօս կը փորէ եւ զիւապետին չարեաց դէմ կ'ըսիսի ոգորել»:

Աւելորդ է ըսելն՝ թէ ո՛րչափ հակօսնեայ սկզբամբ են երկու հատուածները: Աստուած մը որ ստատանային կամ գիւլն իշխանութեան եւ զործոյ հպատակ է. իշխան մը որ իր ստիճն սարսափահար Արիամանն կոչէ յօգնութիւն: Ահրիման (դեւն) Ահուրա Մազդայի համալոր եւ յաւիտենակից է, մանաւանդ թէ աւելի իսկ. զի ուր սա գեղեցիկ եւ լաւ բան մը ստեղծէ՝ Դիւապետն հակառակաւն կ'եղծանէ զայն:

Ենթադրեմք պահ մը զԱհրիման Ահուրա Մազդայի հանդէպ. ո՞վ է հրամայողն եւ ո՞վ հպատակն. ո՞վ Տէրն եւ ո՞վ ծառայն:

Անցնիմք մասանց, նոյն հակասութիւնն:

Յովբայ տէրն Աստուած է. ոչ ոք եւ ոչ մի իրնայ հակառակիլ իրեն: Աւետարայն կ'ըսէ, Ահուրա Մազդա եւ Ահրիման եւ լուսաւորքն հաւասարապէս յաւիտենականք են: Ս. Գրոյ համար բարին եւ չարն Աստուծոյ կամաց հետեւանք են, «Անմիտ,

կ'ըսէ կինն Յորայ. անէ՛ծ զԱստուած եւ մեռի՛ր, որ այսպէս կը
չարչարէ դքեզ. (Բ, 9)։ Նոյն իսկ հետաւոր երկրէ եկած բարե-
կամներն իրենց ամբողջ խօսակցութեան մէջ՝ այդ պատժոյն
յԱստուծոյ եկած ըլլալն կը պնդեն. պատճառելով՝ զի մեղաւոր
եւ արժանի էր այդ հարուածին։ Ոչ ոք կը խորհի ուղղակի դը-
ժոխոց մէջէն համարել այդ ցաւերն։ Մինչ Մազդեզդեանն եւ ոչ
պահիկ մի վարանի պիտի զայդ ամբողջօլիմբ եւ բացարձակ
չար ոգւոյն ընծայել. զի Ահուրա մազդա բարի է եւ չարի ըս-
կիղքն Ահրիման։

Եթէ Աւեստայն մարգարէից ծանօթ էր եւ վրանին փոքր
մի գէթ ազդած՝ գոնէ զոյգն նշմար մը պիտի տեսնուէր այդր
Ս. Գրոց մէջ, ոչ թէ այսպէս բացարձակ հակառակն Գէթ Յո-
րայ հեռաւոր բարեկամաց բերնէն նման իմաստ մը պիտի լսէ-
ինք. մինչգեւ ընդհակառակն։ Եւ զեւ աւելի մանր քննելով.

Ս. Գիրք Կ'ըսեն՝ թէ ոչ ինչ է սուրբ առաջի Աստուծոյ, եւ
'ի հրեշտակս անգամ եղիտ պղծութիւն։ Աւեստա հակառակ ըս-
կզբունքն ունի, Մազդեզեանն սուրբ է, (ashavano). երկնա-
ւորքն ամենասուրբ։ Յովբ զգիսկունս թաղել կ'ըսէ. (Գ, 14,
22, Ժ, 19). Աւեստա անքաւելի եղեւն կը համարի զայն. (Դի-
ւատ, Ա, 48)։ Օձն Գրոց համար Աստուծոյ արարածն է. Աւես-
տականին՝ զիւաց արարածն. (Յովբ ԻԵ, 3։ Դիւատ, Ա, 8)։
Նոյնպէս ձմեռն. Յովբ. ԼԷ, 6. Դիւ. Ա, 8. ԺԹ, 43)։ Նոյնպէս
է եւ յարութեան պաղաւտին. ըստ Յովբայ՝ իւր Փրկիչն կեն-
դանի է, եւ մեռեալն իւր մարմնովն պիտի յարութիւն առնու։
Աւեստայն կ'ըսէ. մեռեալները յարուցանող մարգարէն՝ աշխար-
հիս կատարածին պիտի ծնանի, իսկ յարութիւնն՝ մահուամբ փը-
ճացող մարմնոց համար չէ։ Պահլաւ գիրքն Աւեստայէն անծա-
նօթ բացատրութիւն մը կ'աւելցունէ. Տան ի պասին. (tan i
paçin= ապագայ մարմին)

Դիւաց հաւատքն Հրէից համար չատ հին է. ՀԸ սաղմո-
սին մէջ մարգարէն Աստուծոյ առ Իսրայէլ ցոյց տուած սէրն
եւ եղիպտոսի հարուածներն յաստուածուստ յիշելէն ետքը կը
յաւելու չար հրեշտակաց (mislakat malaki rahim) առաքումն։
Ամեն տեղ Գրոց մէջ կը տեսնեմք չար ոգեաց հնազանդ ծառա-
յութիւնն առ Աստուած։

Դարձեալ. Հեթանոս աստուածներն երկրորդ Օրինաց ԼԲ,
71 գլխովն դեւ (schêdim) կը համարուին. նոյն իսկ Մոնոթոց

Օձն համաձայն մեկնութեամբ սատանայի կերպարանք կը համարուի. Եթէ Հրէից շրջակայ ազգաց մէջ չար ոգեաց սարգսփելի հաւատքն կը տեսնեմք՝ ինչպէս հնար է զանոնք կոխտեղով անցնիլ եւ մինչեւ Իրանաստան վազել՝ այդ ազգեցութիւնն 'ի Հրէայն փոխադրելու համար:

Իսրայելի եւ Մազզեզանց մէջ յարաբերութիւնն նախ Ը դարուն կիսին կամ Թ ի վերջն միայն կրնամք ընդունիլ. Ըի կիսուն Մարաստան՝ Սարգոնի համար հեռաւոր երկիր մ'էր. Սալմանասարի յիշատակարանաց մէջ 835ին առաջին անգամ Պարս անունն կը կարդումք. այդ ալ դեռ եւս տարւամ:

Արդ, Գրոց յիշատակն Սաղմոսին մէջէն մինչեւ 'ի Դաւիթ կը տանի զմեզ, Հնդկամատեանն զեռ աւելի հին է. ո՛ր է յայնժամ Իրանն եւ Աւեստայն, եւ ինչ Իսրայելի իրանական ծանոթութիւնն. Ամենայն ինչ 'ի նպաստ Բրիտանէութեան կը խօսի:

(Շարայարեիլ)

ՊՈՒԿՈՅԻ ԵՐԻՅՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՒՀԻ ՄՈՆԻԳԱՅԻ

ՅԱՐԳՄԱՆԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՐԻԿԵԱՆ

(Շարունակութիւն. Տես անցեալ բիւն)

Մայրութեան արտօնութիւնը փորձանայ հետ կը զօրանայ. եւ ստոյգ է որ Պատրիկոսի մահը դժնդակագոյններէն մին եղաւ. Պատրիկոսի ունեւորութիւնը դրեթէ ոչինչ բան մ'էր:

եւ ինչպէս ըսինք՝ իւր որդւոյն կրթութեանը համար հարկաւոր եղած ծախքը հոգալու համար մեծ նեղութիւն քաշած էր. եւ այսու հանգերձ ժողուած ստակը չբաւելով իւր մահաբաժըրը զՄոնիքան դժուարին նեղութեանց մէջ կը ձգէ։ Ստոյգ է որ այն դժուարին վիճակին նկատմամբ ինքզինքը չմտածէր. աղքատութիւնը իրեն բաժին իյնալով՝ սիրով կ'ընդգրկէ զայն. սուրբերը առ հասարակ յօժարակամ աղքատութենէ լուաղոյն կը սեպեն զակամայն. բայց այսու ամենայնիւ մայր է. մայր մը թէպէտ եւ այն զոհողութիւնները իւր անձին համար կ'ընդունի, բայց չկրնար ուզել զանոնք իւր որդւոյը համար։ Յիրաւի ինչ մեծ զգալողութիւն մը կ'ըլլար թէ որ Օգոստինոս իւր փառաւոր ուսմունքները ընդհատելով՝ աղապայն կորսնցունէր, եւ Թագաստայի մէջ առաջուան պէս անդբաղ եւ դապարկապօրտ կեանք մը վարելով՝ իւր մտաց եւ սրտին աշխուժութիւնը եւ սրութիւնը փթացընելու ըլլար։ Ուստի ասոր առջիւն տունելու համար ամենախիստ նեղութիւններն ալ աչքն առաւ։ Որդին նոյն ատենը իրօք կը հաստատէր՝ մանաւանդ թէ զանցանէր իւր հանճարոյն վրայօք ամէնուն ունեցած ակնկալութիւնները։ Մատենագրական ուսմանց զբաղած ատենը ժամանկած համբաւն ոչ ինչ կրնայ սեպուիլ փիլիսոփայական ուսմանց մէջ ստացած նորանոր յաղթական պատկներու համեմատութեամբ, եւ ասիկցի կը հասկցուի որ իւր զլխաւոր ձիրքը ոչ միայն իւր զարմանալի պերճախօսութիւնն, ոչ ազնիւ եւ խանդակաթ զգայականութիւնն, եւ ոչ սիրուն եւ անզուգական խելքն է. այլ այս ամէն ձիրքերէն զատ այնպիսի զերազանց ձիրք մը երեւան պիտի ելլայ որ առաջինները պիտի նսեմացընէ։ Յիրաւի 372ին՝ երբ Մոնիքա իւր որդւոյն գաստիարակութիւնը ինչ կերպով առաջ տանելու մտածուքովը գիշեր ցորեկ կը տանջուի, Օգոստինոսին մեծ հանճարը հրաշալի կերպով մը երեւան ելաւ։

Մատենագրական ուսմանց պարապած ատեն Սրբապետելի Ստեփաննոս վրայօք շատ անգամ լսած էր իւր վարպետներէն իբրեւ դժուարակնճիւ եւ անխմանալի գիրք մը՝ առանց ճարտարամիտ ուսուցչաց մեկնութեանը, եւ նիւթական ձեւերով միայն բնագանցական խնդրոց մթութիւնները հազիւ կրնային հասկըցուիլ։ Ուստի սոյնօրինակ արտաքոյ կարգի երկասիրութիւն մը կարդալու մեծ փախաք զգալով, եւ չկարենալով համբերել ժամանակը զեռ հեռի ըլլալով փարպեաներու մեկնութեանը, կը բանայ եւ կարդալու կ'ըսկսի զայն ինքնիրեն։ Մեծ կ'ըլլայ

զարմանքը տեսնալով որ ըսածնուն չափ դժուարութեան չհանդիպիր, ընդ հակառակն այն խրթին խնդրոց մէջ ինքը արձակ համարձակ կ'ըզբօսնու, եւ վերջը ժամանակը գալով՝ երբոր կ'ուկսի հետեւիլ վարպետաց մեկնութեանը նոյն խնդրոց վրայօք, կը տեսնայ որ նոր բան մը չեն սորվեցներ, եւ իրենց մեկնած խնդիրները ինքն առաջուց առանց օգնութեան հասկըցած էր: Նոյն կերպով տրամաբանութեան՝ երկրաչափութեան, երաժշտութեան եւ թուաբանութեան գիրքերը ինքն իր զուլի կը կարդայ, եւ ասոնց մէջ ալ դժուարութիւն մը չգտնար. բայց երբ պէտք կ'ըլլայ այլոց ալ զանոնք բացատրելը՝ այն ժամանակ կը հասկընայ այն խնդրոց դժուարիմաց ըլլալը. եւ կը զարմանայ տեսնալով որ չառ խելացի մարդիկ մեծ դժուարութիւն կ'ըզգան հասկընալու զանոնք, եւ քանի մը հանճարեղ անձինք միայն կրնան հետեւիլ իւր մեկնութիւններուն եւ ան ալ անկատար կերպով թէպէտ եւ այն ժամանակ զեռ տառնութիւնը տարեկան է, բայց յայտնի կ'երևայ որ օր մը արժիւի մը պէս աչաց այնպիսի սրատեսութիւն մը պիտի ունենայ՝ որ ո՛ր եւ իցէ լոյս պիտի չի չլացնէ զանոնք. եւ թեւոց այնպիսի տարածութիւն եւ առաքաթոնիչ զօրութիւն մը՝ որ ո՛ր եւ իցէ դադաթ իւրին հաւար բարձր պիտի չերեւի:

Մինչդեռ Օգոստինոսի հանճարը ասանկով յայտնի կ'ըլլայ իր հոգւոյն՝ բնաւորութեան եւ սրտին անպին յատկութիւններն ալ միանգամայն երեւան կ'ելան. տղայութեան ապստամբութիւնները եւ ցնորքները փարատելով՝ հիանալի քաղցրութեան տեղի կուտան: Օգոստինոս օրէ օր աւելի զգաստ եւ պարկեշտ կը հանդիսանայ, հիմա աղմուկէ եւ սնապարծութենէ կը զգուշանայ, ընկերացը խելագար ժողովքներէն հեռու կը փախչի, արժանապատւութենէ եւ ազնուականութենէ կ'ախորժի, անկեղծ եւ բարեխիտ բարեկամաց հետ միայն կը կապուի: Մէկ խօսքով՝ ինչպէս հանճարեղութիւնը, այնպէս ալ սիրտը գեր ի վերոյ չնորհօք եւ ձիրքերով սկսած է շողալ. եւ սրաին այն չնորհալից ձիրքը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ ամենափափուկ խանդաղատութեան եւ ազնուութեան անսպառելի աղբիւր մը: Մարմնոյ ընդհանուր կազմութիւնն ալ արդէն կը յայտնէ թէ արժանի անոթ մը պիտի հանդիսանայ այնքան աննման հաճարոյն եւ պատուական սրտին Բարձրահասակ չսեպուիւր, բայ՝ միջակէն ալ վար չէ. կազմութեամբ տկար է, փափուկ եւ ջղոտ, ինչպէս ընդհանրապէս կը պատահի ընտիր անձանց՝ ըստ խոր-

հրդածութեան Գրիգորի Նազիանզացւոյ, երեսին մօրթը նուրբ
եւ թափանցիկ, նայուածքը խոր, բայց անուշ, հանդարտ, լի
զգացմամբ եւ փափկութեամբ, ձայնը տկար, կոկորդը բարակ,
կուրծքը նեղ եւ ղիւրավառ, ցուցունելու համար որ աւելի տը-
րամազրած է մտաւոր աշխատութեան՝ քան թէ ճառաբանելու,
կամ թէ ըսենք աւելի համոզելու քան թէ տիրապետելու, ա-
ւելի յարմար մտերմական՝ սիրուն եւ համոզիչ խօսակցութեանց
ընտիր բարեկամաց ընկերութեան մէջ, քան թէ աղմկալից ժո-
ղովոց մէջ բարձրագոյն ճոռումարանութեանց, մէկ խօսքով բո-
լոր իւր անձին վրայ կատարեալ ազնուութիւն եւ պատուաւո-
րութիւն մը կը փայլի:

Թէ որ Մոնիգա աշխարհասէր կնիկ մը ըլլար, տեսնալով
իւր որդւոյն վրայ այնքան պատուական ձիւղեր, այնպիսի կան-
խահաս եւ փայլուն հանճար, անտարակոյս որ ամբարտաւան
ոգիով մը պիտի փքանար. բայց ինքը այն գեղեցկատեսիլ կեղ-
եւին ներքեւ տհաճի ապականութիւն մը կը նշմարէ՝ զորն որ
մոլութիւնը պատճառած է, վէրք մը՝ որ օրէ օր կը բացուի՝
կընդարձակի, խիղճ մը՝ անմահ հոգի մը, այսինքն իւր սիրելի
որդւոյն հոգին որ կը կորսուի Այս տեսութիւնը սոսկ սգալից
թանձր քօղի մը պէս կը ծածկէ անոր ամէն արտաքին բարի
յատկութիւնները:

(Շարայարելի)

ԱՐՏՈՆԱՅԻՐ
ՅՈՎՍԷՓ ՇԷՂԵԱՆ

ԱՌ ԶԵՌՆ

ԲԱՌԱԳԻՐՔ

ԼԱՏԻՆԵՐԷՆ—ՀԱՅԵՐԷՆ

Ի ՊԷՏԱ ԴՊՐՈՑԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Տ ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ՄԻՍԲԻՃԵԱՆ

ՊԵՏԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ ՅՈՒՐԲԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ
ԵՒ Ի ՀՈՌՎԱԾԵԱԿԱՆ ԿՂԵՐԱՆՈՑԻ

Ի ՀՈՌՎԱԾ

Ի ԲԱԶՄԱԼԵԶՈՒԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Թ. ԺՈՂՈՎՈՅ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱԻԱՏՈՅ

1893 — ՌԵԽԲ

ՊՍԿԵՐ տան և հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դանեկան
Գաւառաց և օտար երկիրներու համար
քղբատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Խրաքանչիւր թիւ 2 դանեկան

ՊՍԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եեշի փողոց
Թիւ 1, ուր պէտք է դիմել բաժանորդագրութեան և բերքին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N° 1